**Հավելված N 1**
**«ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/78»* ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***
**Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու**

**ՕՆՄԵԴ ՍՊԸ**-ն_հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/78» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

**ՕՆՄԵԴ ՍՊԸ**-ն_հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

ՕՆՄԵԴ ՍՊԸ_-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00162745
  հարկի վճարողի հաշվառման համարը
- բանկային հաշվեհամարն է՝ 2052222086831001
  բանկային հաշվեհամարը
- գործունեության հասցեն է՝ Այգեձոր 74, բն. 4, Երևան, ՀՀ
  գործունեության հասցեն
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ vardazarian@gmail.com
  էլ. փոստի հասցեն
- հեռախոսահամարն է՝ +37455333330
  հեռախոսի համարը
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО ОНМЕД
  ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

Սույնով **ՕՆՄԵԴ ՍՊԸ**-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) **ՕՆՄԵԴ ՍՊԸ**-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/78»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և **ՕՆՄԵԴ ՍՊԸ**-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում [1]

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքների արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

- բացակայում է իրավերով սահմանված **ՕՆՄԵԴ ՍՊԸ** -ին փոխկապակցված անձանց և (կամ) **ՕՆՄԵԴ ՍՊԸ** –ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս **ՕՆՄԵԴ ՍՊԸ** –ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

**<u>ՕՆՄԵԴ ՍՊԸ</u>**-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

Լիազորված անձ՝ Վադիմ Վարդազարյան
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

VARDAZARYAN VADIM 2309820237
Digitally signed by VARDAZARYAN VADIM 2309820237
DN: c=AM, sn=•••••••••••, givenName=•••••, serialNumber=254ad6b0388a, cn=VARDAZARYAN VADIM 2309820237
Date: 2024.08.22 10:36:40 +04'00'
(ստորագրությունը)

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:

**Հավելված N 1.3****
**«ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/78»* ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՁԵՎ**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է ՕՆՄԵԴ ՍՊԸ -ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1525788/declaration/d4efa9af-e151-4f12-bc53-56234fee8038 ***

Լիազորված անձ՝ Վադիմ Վարդազարյան
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

VARDAZARYAN VADIM 2309820237
(ստորագրությունը)
Կ. Տ.

Digitally signed by VARDAZARYAN VADIM 2309820237
DN: c=AM, sn=•••••••••••, givenName=•••••, serialNumber=254ad6b0388a, cn=VARDAZARYAN VADIM 2309820237
Date: 2024.08.22 10:38:50 +04'00'

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** 1,3 հավելվածը.*
*-ներկայացվում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից*
*-չի ներկայացվում այն մասնակցի կողմից, ով ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր*
**** լրացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:*

OnMed
LIFE OF QUALITY

Հասցե ՀՀ,ք.Երևան, Այգեձոր 74,բն.4
ՀՎՀՀ 00162745
Հեռ. +37455333330
Էլ.հասցե Nelli.Hakobyan@OnMed.am
Տնօրեն Նելլի Հակոբյան


# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Երևան 29.08.2023թ

Սույն լիազորագրով <<Օնմեդ>> ՍՊԸ -ն (ՀՎՀՀ 00162745, ք. Երևան, Այգեձոր 74, բն.4) ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Նելլի Հակոբյանի, լիազորում է Վադիմ Վարդազարյանին (նույնականացման քարտ 013881503, տրված 04.07.2022թ., 004-ի կողմից) հանդես գալ ընկերության անունից, կատարել վճարումներ կազմակերպության վճարային քարտով, ներկայացնել դիմումներ ծառայությունների, ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի համար, ստանալ և ստորագրել փաստաթղթեր, ինչպես նաև կատարել ցանկացած գործողություն՝ կապված ընկերության օրինական շահերը ներկայացնելու և պաշտպանելու հետ:

Լիազորագիրը ուժի մեջ է մինչև 2025թ. օգոստոսի 31-ը:

Լիազորող
<<Օնմեդ>> ՍՊԸ
Տնօրեն
Նելլի Հակոբյան

ԻՆԵԿՈԲԱՆԿ

21/08/2024 № Ե 6235

**ԵՐԱՇԽԻՔ N EA24/00790**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ**-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/78** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ՕՆՄԵԴ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **1,467,000.00 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **1150001612200100** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև **30/06/2025թ.**-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **norq-marash-gnumner@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
**ԿԳ ՓՄՁ ԲԻԶՆԵՍԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆ**

Կատարող՝ Այա Ամիրյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5451)